# ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ Է ՆՇԱՆԱԿՎԵԼ ԱՐԱ ՋՈՀՐԱԲՅԱՆԸ

05.10.2021 20:49




Այսօր՝ 2021թ. հոկտեմբերի 5-ին «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի կառավարման խորհուրդը՝ մասնակցությամբ խորհրդի նախագահ Սիմոն Բաբայանի, խորհրդի անդամներ՝ Լ. Հովհաննիսյանի, Լ. Դավթյանի, Ն. Հակոբյանի և Տ. Խուրշուդյանի, միաձայն ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրեն են նշանակել Արա Ջոհրաբյանին:

ՀՀ փաստաբանական դպրոցի խորհրդի նախագահ Սիմոն Բաբայանը, Արա Ջոհրաբյանին ներկայացնելով, նշել է, որ Արա Ջոհրաբյանի արդյունավետ կառավարման և դասախոսական փորձը օգտակար կլինի Փաստաբանական դպրոցի համար:

Արա Ջոհրաբյանը, շնորհակալություն հայտնելով վստահության համար, նշել է, որ համաձայնվել է Սիմոն Բաբայանի առաջարկին նաև ՀՀ փաստաբանական դպրոցի առջև հնարավոր մարտահրավերները հաշվի առնելով:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })